Վեհափառ Հայրապետը նախ քան այս հեռագիրներն ուղարկելը և կոտորածի լուրերն առնելը՝ Պօղոս փաշային ապրիլի 5-ին հեռագրել է Կահիրէ, որ ազգային շահերի պաշտպանութեան և իւր առաքելութիւնը (միսսիան) շարունակելու համար, անհրաժեշտ է իւր շուտափոյթ ներկայութիւնը Լօնդոնում և Փարիզում և առաջարկում է մեկնել շուտով Եւրոպա։ Պօղոս փաշան յայտնելով իւր պատրաստակամութիւնը՝ մեկնել է Փարիզ, որտեղ գտնւում է այժմ։

## ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՁԱՅՆԸ.

Արդէն պարբերական մամուլը լի է տեղեկութիւններով, որ Վանը պաշարուած է տաճիկ զօրքերի կողմից, իսկ շրջակայ գիւղերը մատնուած կոտորածի ու թալանի սկսուած ապրիլի 6-ից։ Այդ կոտորածների թիւն, ըստ որոշ աղբիւրների, հասնում է 5—6000։

Մայիսի 6-ին Վեհափառ Կաթուղիկոսն ստացել է Լիմ Անապատից հետևեալ սրտաճմլիկ գրաւոր տեղեկութիւնները, որ բերում ենք այստեղ։

### Գլխաւոր եւ Վեհափառ Տէր։

Ձայն գուժի, Ձայն ողբի և աղաղակի տարաբախտ որդիքդ Ազգանազեան զարմի ամէնքը մէկ հարուածով յարմատէ կոտորեցան, աւերակ ամայացեալ անապատացեալ երկիրը կուլայ և կը-խնդրէ իր կորսուած որդիները ու չկրնար գտնել, զի այլ ևս չկան։

Հինգ տարեկան մանուկէն մինչև հարիւրամեայ ծերունին սրախողխող եղան, հարսունք և կուսանք միահամուռ գերուեցան, գիւղ և դաշտ, լեռ ու ձորը, նկուղ ու հորը լիք են հայոց դիակներով, գայլեր ու գազաններ յագեցան՝ գոհացան հայոց արիւնով, գետեր և աղբիւրները կարմիր փոխուած են, սակայն տակաւին մարդ գազան թիւրք կառավարութիւնը չգոհանար, չյագենար, դեռ կփնտռէ՝ դեռ կորոնէ՝ նկուղներէն՝ ձոր ու փոսերէն աղուէսներու պէս դուրս կը հանէ ու կխողխողէ։

Վասպուրականը որպէս ապստամբ և հակառակ ներկայացուցուած է Թուրք կենդրոնական կառավարութեան, և Արքայավաւեր հրովարտակով աղատ ու համարձակ սկսեալ ապրիլ 6-ին մինչ ապրիլ 14-ը, այս տողեր գրուած բոպէին տակաւին կկոտորուին անմեղ հայեր, և քար ու հողը կներկուի հայու անմեղ արիւնով։

Միմիայն մօտ 3000 երիտասարդներով և նոյն թուով կոյսերով և հարսներով պատուած ծրարուած կամք Լիմ Անապատի կղզիի մէջ՝ համբելով օրհասականիս։

Ոչ մի կողմէ օգնութիւն, ոչ մի կողմէ փրկութիւն Աստուծմէ ի զատ, ի սէր Աստուծոյ, Հայր, Հայր, ողորմէ մեզ, անմիջական և երագահաս ըրէ օգնութեան Ձեռքը և փրկութեան ժամը։

Եթէ երեք օր ալ ուշանայ գուցէ ալ ոչ ոք մնայ, բացի կոճ-չայեալ հայ գաւառներէն։

Ա՜հ, սա փտտած և մէջ պարապ մի ծառ էր, ինչու Ռուսական մի թեթև հովն ալ այսքան ուշացաւ։

Սահմաններ պարապ են, ուժը չկայ Վանի մէջ, եթէ ռուս կառավարութիւնը զբաղուած է, գէթ երկու կամ երեք հազար մեր համարիւն եղբայրներէն մեզ օգնութիւն փութացնելու շնորհ ու գթութիւն թող չզլանայ նոյն քրիստոնէապաշտպան հզօր կայսրութիւնն եղջերուներու ոտներով և Արծուի թեւերով։

Կըհաւատանք որ թուրքը իսպառ պիտի իյնայ Վանի մէջ։ Վանը պարիսպներով ներս հրդեհուած ու կոտորուած է. իսկ Այգեստանը կը լսուի թէ տակաւին կը մնայ դիմադրական, շրջապատուած բոց ու կրակով։

Արդ յոյսերնիս ու սրտերնիս առ Բարձրեալն Աստուած, իսկ աչքերնիս դէպի օգնութեան շաւիղներ յառած, կը սպասենք կիսամեռ։ Արդեօք, Աստուած մեր, չենք գիտեր Ձեր օգնութիւն իրագահաս պիտի լինի՞, եթէ ոչ թուրք կառավարութեան թնդանօթներ կամ զինուորներով լեցուած նաւերը։

Կղզիաբնակ սևաբաղդ և սգաւոր կրօնականք և աշխարհականք։

14 Ապրիլի 1915 Լիմ Ս. Անապատ.